ՀԵՂԻՆԷ

ՎԷՊ

Տ-ին Մ. ՄԱՐԻՍԵԱՆԻ

(ՆաբուՆակութիւն [1])

XV

—Կը յոգնես, Հեղինէ, տուր ես ջրեմ ծաղիկները, ասաց Ամիրանովը մտնելով պարտէզը, և, գրկելով կնոջ իրանը, առաւ ձեռքիցը ցնցուղը։

—Թող, քիչ է մնացել, դու կը փչացնես ծաղիկներս։

Այդ օրը Ամիրանովը սովորականից շուտ էր վերկացել, տենդային անհամբերութեամբ հագնուել էր ու խմել առաւօտեան սուրճը, կարծես իւր համար մի առանձին բան սպասելիս լինէր այդ օրը։

—Քեզ լաւ պահիր, հոգիս. այժմ քո կեանքը ինձ համար կրկնապատիկ թանկ է։

Հեղինէն զարմացած և գորովանքով յառեց աչքերը մարդու վերայ։ Վաղուց է որ նա նորան այնպիսի լաւ և ուրախ տրամադրութեան մէջ չէր տեսել, ինչպէս այդ առաւօտ։

—Կ՝ուրախանա՞ս որ երեխայ ունենաս, Միշէլ։

—Ի հարկէ. ծերութեան միակ մխիթարութիւնը երեխաներն են. երեխատէրը գոնէ գիտէ թէ ինչի համար է աշխատում և թէ իւր անունը իւր հետ չի կորչիլ։

---

[1] Տե՛ս «Մուրճ»-ի № 6, 7 9.

Հեղինէի աչքերը փայլեցին ուրախութիւնից, նորա սրտում յոյս ծագեց, որ երեխայի ծնելուց յետոյ նոցա կեանքը բոլորովին կը փոխուի, որ հայրական սրբազան պարտականութեան զգացմունքը բոլորովին կը կերպարանափոխի մարդուն։ Հեղինէն այնպէս երջանիկ էր զգում իրան երևակայելով կատարելիք փոփոխութիւնը, կարծես այդ բոլորը արդէն կատարուած իրականութիւն լինէր, և բոլոր ջահել մայրերին յատուկ հրճուանքով խօսում էր երեխայի ապագայի մասին։

Ամիրանովը ուշադրութեամբ ու սիրով լսում էր։

—Սակայն, հոգիս, ծառայութեան գնալու ժամանակն է։

—Շատ ուշ ես դալիս տուն, Միշէլ, չի՞ լինի մի քիչ շուտ գաս։

—Կ՚աշխատեմ, ասաց Ամիրանովը, կանգ առնելով պարտէզի դրան մօտ և օդային համբոյր տալով կնոջը։

Ասե՞մ Հեղինէին թէ չէ... չէ՛, աւելի լաւ է սպասեմ մինչև որ պաշտօնապէս յայտնեն. կանանց բերնում չիր չի թրջուիլ, ամբողջ քաղաքը կ՚իմանայ. համ էլ անսպասելի կերպով որ իմանայ՝ աւելի կ՚ուրախանայ, մտածում էր նա կանգնած տան դրան մօտ։

Անցաւ մի քանի օր. Հեղինէն մենակ նստած էր. յանկարծ զանգը քաշեցին և մի քանի րոպէ չանցած ներս վազեց Ելիզաւետա Բոգդանովնա Միհրանովան ու սկսեց շնորհաւորել նորա մարդու բարձր պաշտօն ստանալը։ Հեղինէն ինչ-որ յիշեց և տխրեց. նա ուզում էր մի հարց առաջարկել Միհրանովային, բայց իրան զսպեց ու ոչինչ չը հարցրեց։

—Ուրախութեանս չափ չը կայ. դուք գիտէք որ ես ձեզ իմ զաւակներիցս չեմ ջոկում. ոչ ոք այնքան չի աշխատել, որ Միխայիլ Պետրովիչը այդ պաշտօնը ստանայ, որքան ես. ասենք նա այնպէս մարդ է, որ նորա համար արժէ աշխատել։ Ուր է, տանը չէ՞։

—Չէ, դեռ ծառայութիւնից տուն չի եկել։

—Ափսոս, ես նրան ունէի ասելու. բայց ոչինչ, ձեզ էլ կարող եմ ասել։

Կարծես այսօր քէֆ չ՚ունէք... հա՛, իմացայ, այդ ձեր ապագայ ժառանգն է ձեզ անհանգստացնում, հա՛, հա՛, հա՛։ Ի հարկէ կ՚երթաք այսօրւայ ձիարշաւին նայելու. ափսոս որ ես չեմ կարող գնալ։ Երևակայել անգամ չէք կարող թէ որքան ժամանակ է խլում

ինձնից բարեդործական ընկերութիւնը. ես անպատճառ կ'ասեմ կոմսուհուն, որ ձեզ խնդրի մեր մանաժողովի անդամ դառնաք, համաձա՞յն էք։ Այդպէս էլի, Միխայիլ Պետրովիչը տանը չէ՞։

Եթէ Հեղինէն չ'իմանար, որ Միհրանովան սովորութիւն ունի մի անդամից հազար հարց առաջարկել մարդու, հարցեր, որոնցից շատը պէտք է անպատասխան մնային, կը շփոթուէր չ'իմանալով որին պատասխանի, բայց նա արդէն ճանաչում էր Ելիզաւետա Բոգդանովնային։

—Չեմ իմանում, ում հետ ուղարկեմ աղջիկներիս. խեղճերի սիրտը շատ է ուզում գնալ, իսկ ես չեմ կարող զրկել նոցա զուարճութիւնից։

Տեսնելով որ Հեղինէն չի ֆահմում ասի թէ ինքը կը տանի, նա ուղղակի յայտնեց իւր միտքը. որովհետև ես միայն ձեզ վերայ եմ բոլորովին վստահ, ձեզ հետ միայն կը թողնեմ, հետներդ տարէք։

—Շատ շնորհակալ եմ, որ ինձ վերայ վստահ էք, բայց ես ձիարշաւին չեմ գնալու։

Հեղինէի տոնը դիպաւ Ելիզաւետա Բոգդանովնայի սրտին. նա սատը-սատը մնաս բարև ասաց ու գնաց։

Ա՛յ թէ ինչու է մարդս այս քանի օրը ուրախ, իսկ ես չիմարբարար կարծում էի թէ շուտով հայր դառնալու յոյսն է նորան այդքան ուրախութիւն պատճառում, մտածեց Հեղինէն մենակ մնալով։ Զը լինի Կատեան այդ պաշտօնի համար էր այն օրը ակնարկում, Միքայէլը գայ տեսնենք, բանը կը պարզուի, տարակուսում էր Հեղինէն և ինչ-որ մի անախորժ զգացմունք տրորում էր նորա սիրտը։ Է՜հ, ես վաղուց եմ նկատել, որ մենք միմեանց չենք համակրում... և յիշեց Հեղինէն թէ ո՛րքան ապարդիւն կերպով աշխատել է գրաւել մարդու համակրութիւնը։

Նա աշխատում է միայն, որ ես նիւթական կողմից պակասութիւն չը զգամ, լիութեան մէջ լինեմ, էլ չի մտածում թէ աշխարհումս, բացի դորանից, ուրիշ պահանջներ էլ կան։ Ուրախութիւնից չի իմանում ինչ անի երբ որ գովում են իմ երեսահարքս և բոլորովին գոհ է լինում ինձանից, երբ որ ժամանակին այցելութեան եմ գնում այն տները, որոնց հետ նա ուզում է գնալ-գալ ունենալ, բայց սկի չի հարցնում, թէ արդեօք նրանց հետ ծանօթութիւն ունենալը ինձ հաճելի է թէ չէ։

—Կարող ես ինձ շնորհաւորել, Հեղինէ ջան, հանեց նորան մոռախոհութիւնից Ամիրանովի ձայնը, վերջապէս կարգին պաշտօն ստացայ։ Ա՛յ այժմ, հոգիս, համ օթեակի աբոնեմենտ կարող ենք վերցնել, համ jour fixe նշանակել։

Այդ ժամանակ կողքի սենեակից կանացի հագուստի խշխշոց լսուեց.—Ամիրանովի քոյրերն էին, որոնք շատ անգամ յետի դռնիցն էին տուն մտնում, որ աննկատելի կերպով յայտնուելով կարողանան իմանալ թէ ինչ է կատարուում Նեքսուում։ Լսելով մարդ ու կնոջ խօսակցութիւնը, նոքա սկսեցին փչփչալ ու վճռեցին ճնալ կողքի սենեակում, որ ականջ գնեն ու իմանան թէ ինչի մասին են նոքա խօսում. Թամարին սկզբում վատ թւաց քրոջ առաջարկութիւնը, ուզեց մտնել միւս սենեակը, որ իմանան իրանց գալը, բայց մի ուրիշ զգացմունք յաղթեց այդ սկզբում ծագած և միշտ ազնիւ զգացմունքին և նա նստեց Եփեմիայի կողքին։

Մի քանի ժամանակից սկսած Ամիրանովը սկսել էր շատ սիրով վարուել Թամարի հետ. այդ շատ ուրախացնում էր Թամարին և պրպում աշխատելու աւելի էլ դուր գալու նորան։ Քրոջը չէր սիրում Թամարը, բայց ստիպուած էր խոստովանուել, որ նա շատ լաւ կարողանում է դուր գալ Միխայիլ Պետրովիչին և դորա համար շատ անդամ անզգալի կերպով ընկնում էր Եփեմիայի ազդեցութեան տակ։

Եփեմիան ու Թամարը դրան յետև նստած լսում էին։

—Ինչ եղաւ քեզ, Հեղինէ, այնպէս եղար, կարծես մի բանից վախեցար։ Քսանինները տարեկան հասակում այդպիսի պաշտօն ու չորս հազար ռոճիկ ստանալ հազարից մէկին չի յաջողում, իսկ դու յօնքերդ կիտում ես։

—Դու ինձ այն ասա, հօ՛ նոր ստացած պաշտօնդ Ն-ձէի պաշտօնը չի՞։

—Նա, խելքս, լաւ գտար, իսկ ես կարծում էի թէ քեզ ամենևին չեն հետաքրքրում իմ շահերն, կատակով ասաց Ամիրանովը։

Նա նկատում էր որ գնալով կնոջ քէֆը վատանում է ու սկսեց սրտացաւութեամբ հարցնել, թէ հօ՛ էլի ցաւը չի բռնում, որ վերջին ժամանակը շուտ—շուտ էր անհանգստացնում նորան։

—Չէ, Միշէլ, շատ լաւ եմ զգում ինձ։ Սիրտս ուրիշ բան է

ցաւացնում։ Մինչև այժմ ես ապրում էի երևակայութեամբ ու ուշադրութիւն չէի դարձնում իրականութեան վերայ, ես քո արածները այնպէս չէի տեսնում ինչպէս որ իսկապէս են, այլ աւելի լաւ էի բացատրում, իսկ այժմ շատ բան է պարզւում։

Այժմ հասկանում եմ թէ ինչու մի քանի ժամանակից ի վեր ամեն կերպ աշխատում ես հեռու պահել քեզ և չը խառնուել որոշեալ խնդիրների ու գործերի մէջ։

—Տուտուց բաներ ես ասում, հոգիս, Աստուած վկայ, չեմ հասկանում թէ ինչ ես ուզում ասել։

—Միթէ՞ խիղճդ քեզ չի տանջում, որ ծեր ու ահագին ընտանիքի տէր մարդու ձեռքից խլել ես պաշտօնը։

Ամիրանովը մի քիչ շփոթուեց. նորա սրտում յանկարծ կասկած ծագեց, թէ մի գուցէ կինը իմացել է իւր Ն-ձէի դէմ լարած թակարդները ու ինտրիգաները, բայց նա այնքան վստահ էր իւր ճարպկութեան ու խորամանկութեան վերայ, որ կասկածը նորան բոլորովին անհիմն թւաց և նա իւր համոզիչ տօնով ասաց։

—Հաւատացիր, Հեղինէ, որ իմ բոլոր ջանքերիս ու աշխատանքներիս նպատակը քո և մեր երեխայի ապագայի ապահովացնելն է, իսկ այդ նպատակին հասնելու համար ընտրուած միջոցները այնքան ազնիւ և իւելացի են, որ ոչ մի առողջ դատողութեան տէր մարդ պարսաւելի չի կարող համարել։

—Ջուր ես, Միշէլ, արդարանում Նորանով, որ իմ ապագայի համար ես այդ անում։ Վա՛յ այն բախտին, որ ուրիշների թշուառութեամբ է ձեռք բերւում, ուրիշների բերնից խլուած հացը իմ բդովը կուլ չի գնալ։ Հաւատացած կաց, Միշէլ, որ անարդարութեան վերայ հիմնուած բախտը անիծուած է. ուրիշներին զրկողը վաղ թէ ուշ կը պատժւի և վերջապէս էլ ինչի՞ համար է ապրում մարդ՝ կարգին և ազնիւ մարդկանց յարգանքից ու համակրութիւնից զրկւելուց յետոյ, իսկ ուրիշի տունը քանդելով, բախտաւորողը չի կարող վայելել ազնիւ մարդկանց յարգանքը։

Հեղինէն արտասանեց այդ խօսքերը խրոխտաբար գլուխը բարձրացրած, բաց ճակատով, այնպէս, ինչպէս կարող է խօսել միայն զարգացած, բոլորովին կազմակերպւած բնաւորութեան ու հայեացքների տէր մարդ։ Ամիրանովը մինչև այդ ժամանակ երբէք տեսած չը կար

կնոջը այդպիսի տրամադրութեան մէջ և լսած չը կար նորանից այդպիսի վճռական խօսքեր։ Կնոջ, նորա կարծիքով, տուտուց նկատողութիւնները վաղուց նորան զզուեցրել էին, քիչ էր մնում աչքերը խփէր չերանը բաց անէր ու հայհոյանքների տոպրակը թափ տար, բայց իրան զսպեց և բռնազբօսելով իւր զգացմունքները քնքշութեամբ նստացրեց կնոջը բազմոցի վերայ ու մի ձեռքով գրկելով նորա իրանը զգացուած սրտով ասաց։

—Մի վրդովուիլ, դու այնպիսի դրութեան մէջ ես, որ այդ կարող է քեզ վնասել։ Սիրտս դաղում է, տեսնելով, որ դու այդպէս հեշտ հաւատ ես ընծայում ամեն մի յիմար խօսքի։ Ով գիտի ինչե՞ր են ասել քեզ իմ մասին, մանաւանդ իդէալական անարատ Սահաուունին։

—Երդւում եմ, որ նա երբէք ակնարկով անգամ տեղիք չի տուել ինձ՝ քո վերայ վատ կարծիք տանելու. ընդհակառակը, նա ամեն անգամ, երբ առիթ է լինում խօսելու քո մասին, քեզ պաշտպանում է, տաքացած պատասխանեց Հեղինէն։

—Ցետոյ այդ բանի մասին երկար ու բարակ կը խօսենք, իսկ հիմայ պատուիրիր շուտով տուփրան գցեն։

Հեղինէն վեր կացաւ տեղիցը ու դանդաղ քայլերով, կարծես մի բանի վերայ միտք անելով, դուրս եկաւ պատշգամբը. դրսուի հովը տուեց երեսին և մի քիչ զովացրեց նորա բորբոքուած ճակատը։ Կարծես նորա աչքերը մինչև այժմ ոչինչ չէին տեսնում և այժմ յանկարծ բացուեցին, մարդու վարմունքներից շատերը, որ առաջ նորա համար անհասկանալի էին, այժմ պարզուեցին նորա համար։ Նա զգաց, որ բարոյական աշխարհում կնոջ չնչին դեր չի վիճակուած, նա զգաց որ ինքը կարող է և պարտական է օգնել մարդուն, ազատել նորան, որ նա, իւր համոզմունքի հաստատութեան և իւր համբերութեան շնորհիւ, կարող է մարդու կեանքին ուրիշ, աւելի ազնիւ ուղղութիւն տալ։

Հենց որ Հեղինէն ոտը առանձնասենեակի շեմքից դուրս դրեց, Ամիրանովը զգաց որ մենակ է և ազատութիւն տուեց իւր զգացմունքներին, նորա դէմքը ծամածուեց չար քմծիծաղով և նա բաւական բարձր ձայնով արտասանեց նորա յետևից.

—Ի՞նչ յիմար սանտիմենտալութիւն է. մենք հօ ուրիշ-

ների արտասուքը սրբելու համար չենք ծնուել. մեր գլխի ճարը հազիւ ենք տեսնում։ Բայց տես ի՞նչ լեզու է ունեցել, ով կարող էր կարծել, կ՚ասէիր անմեղ գառը լիներ։ Զէ, այսուհետև վճռուած է, պէտք է սանձը քաշել, թէ չէ՝ չափը բոլորովին կը մոռանայ։ Այդ էլ մեր պարոն երիտասարդների տուած օգուտն է, նոցա ազդեցութիւնն է, տունս ջրի ճանապարհ են շինել, գալիս են նստում ու իրանց տուտուց փիլիսոփայութիւններով կնոջս գլխահան անում. չէ, դրան պէտք է վերջ տալ։ Էլ ազատութիւն չեմ տայ կնոջս... նոր ծանօթներ, նոր շրջան, ամեն բան պէտք է փոխել, կինս պէտք է օգնի ինձ իմ յարաբերութիւնների ու ծանօթութիւնների մէջ։

—Ենորհաւորում ենք, եղբայր, վախվխելով ասացին քոյրերը ներս մտնելով։

Նոցա հետ խօսելիս Ամիրանովը հասկացրեց որ յոյս չ՚ունենան թէ այնուհետև իրանից ապրուստի համար աւելի փող կը ստանան։

—Դուք հօ գիտէք, որ իմ նոր դիրքս աւելի մեծ ծախսեր կը պահանջի...

—Ի հարկէ, ո՞վ չը գիտէ որ այդպէս է, ասաց Նփեմիան։

Թամարը ստրկական շողոքորթութեամբ գլխով արեց ի նշան համաձայնութեան։

—Ո՞րտեղից եկաք, Թամար, որ ես ձեզ չը նկատեցի։

—Դռները բոլորովին բաց էին. Հեղինէին ասա մի քիչ լաւ նայի տանը, թէ չէ ունեցած չ՚ունեցածներդ կը մնեն կը տանեն, շորս կողմը աչք ածելով կամաց արտասանեց օրիորդը։

—Ճիշդ է, այդ լաւ չէ, պէտք է զգոյշ կենալ։ Մոռացայ ասեմ, Թամար, որ շուտով կը ստանաս ձեռի ծախսելու փողդ. լաւ կանէիր շորեր կարել տալիր քեզ համար։

—Ես գիտէի որ դու անչափ բարի ես, Միքայէլ։

—Այժմ իմ գլխաւոր հոգս պէտք է լինի քեզ մարդու տալ։

Թամարը աչքերը գցեց գետին։

—Ես առաջ էլ միշտ յիշում էի այդ պարտականութիւնս, բայց մեր ժամանակներում առանց փողի դժուար է պսակ գլուխ բերել։ Թող այժմ լաւ փեսացու գտնի, չեմ ինայի, բաժինք կը տամ։

—Օ՜հ, ո՜րքան սէր, որքան բարութիւն կայ սրտումդ, միաձայն բացականչեցին քոյրերը։

—Միքայէլ, չը բարկանաս, քեզ մի խորհուրդ պէտք է տամ, մի քանի բոպէ լուռթիւնից յետոյ խորհրդաւոր եղանակով սկսեց այրին, մի քիչ լաւ մտիկ արա կնոջդ, հիմիկուան ջահէլներին հօ ճանաչում ես, կինդ էլ մի քիչ թեթև է։ Հիմիկւայ նոր գաղափարներն էլ հօ հասարակութեան համար թոյն են, թոյն։

—Դուք նորանից մեծ էք, խրատեցէք թէ ինչպէս պէտք է իրան պահի, միայն մի քիչ զգոյշ վարուէք, մի քիչ տկար է, պատասխանեց Ամիրանովը ու դուրս եկաւ սենեակից։

—Իմ կարծիքով, Թամար, Միքայէլը այդպիսի կնոջով երկար չի մնայ այդ պաշտօնում։

—Հա, Եփեմիա, զարմացած մնացի լսելով թէ ինչպէս էր գոռում Միքայէլի վերայ։ Ի՞նչ գուռոցն է եղել։

—Մարդու ծիծաղ է գալիս, որ մտածում է, թէ ինչի վերայ է հպարտանում ու քրքրւում. բերածը եօթ հազար է եղել, լեզուն միլիօն բերողի լեզուից երկար է։

—Միտդ է, Եվեմիա, ի՞նչ հարուստ աղջիկներ էին ուզում տալ Միքայէլին։

—Ինչպէս միտս չը լինի։ Ը՛սսս... հրէս գալիս է։ Ցանկարծ կը լսի ու Միքայէլին կը համոզի, որ կտրի մեր թօշակը. տուածն էլ հօ՛ առանց այն էլ մի բան չէ։

Այրին դիմաւորեց Հեղինէին, աչքալուսանք ասաց և հազար ու մի բարեմաղթութիւն թափեց գլխին, որ տոպրակներով պատրաստ ունէր ու ամենքին բաժանում էր առատաձեռն։

—Որքան բախտաւոր էք, Հեղինէ, ջահէլ-ջահէլ այդքան առաջ գնացիք, քաղցրութեամբ ասաց նրան փոքրիկ տալը։

—Իմ կարծիքով այդ մի մեծ բախտաւորութիւն չէ, Թամար։

—Էլ ինչ էք ուզում, չը կարողանալով համբերել վրայ պրծաւ այրին։ Դուք այնպիսի մարդու էք գնացել, որ ձեր պսակին հազարաւոր կանայք կը նախանձեն։

Հեղինէն անհամբեր շարժմունք արեց ու արհամարհական հայեացք գցեց տալի վերայ։

—Ինչո՞ւ էք բարկանում, հոգիս, ես, կարծեմ, ոչինչ մի վատ բան չ՛ասացի, հանդարտութեամբ պատասխանեց այրին։

—Բաւական է խօսենք դորա մասին. աւելի լաւ է գնանք ճաշելու, Միքայէլը ի՞նչքան ժամանակ է մեզ սպասում է։

Երեքն էլ գնացին սեղանատուն։

Ճաշից յետոյ շատ չ՚անցած եկաւ Սահառունին և սկսեց կնոջ կողմից խնդրել Հեղինէին որ իրանց հետ գնայ ձիարշաւին նայելու։ Հեղինէն ասաց, որ իւր կարծիքով անյարմար կը լինի այժմ գնալ, քանի որ մի քիչ առաջ մերժել էր Միհրանովայի խնդիրքը, ասելով որ ձիարշաւին չի գնալու և այդ պատճառով չի կարող տանել նորա աղջիկներին։

—Ի՞նչ հիանալի կին է, ո՛րքան սիրում է մեր Միքայէլին, իսկ դու, Հեղինէ, սիրտ ես արել մերժել նորա այդպիսի չնչին խնդիրքը։

Հարսը ուշադրութիւն չը դարձրեց տալի նկատողութեան վերայ և շարունակեց իւր խօսակցութիւնը Սահառունու հետ։ Նորա ներկայութիւնը շատ լաւ ներգործում էր Հեղինէի վերայ. նա հետզհետէ աւելի և աւելի հանգստանում էր։ Հեղինէն շատ խնդրեց նորան որ մնայ, բայց նա շտապում էր, որովհետև կնոջը խոստացել էր հետը գնալ ձիարշաւի։

Կատարինէն արդէն մօտ կէս ժամ էր ինչ սպասում էր նորան զարունքայ շքեղ հագուստով։ Ձիարշաւից վերադառնալուց յետոյ, նա ուրախ-ուրախ ընկաւ մարդու վզովը և յիշեցրեց նորան, որ խոստացել էր տանը երեկոյթներ սարքել։

—Շատ լաւ, ի դէպ՝ վաղը չէ միւս օր քո ծնունդն է, ասաց Սահառունին։

—Չեմ իմանում, կանչե՞մ թէ չէ Միհրանովենց... դու չես սիրում նոցա, շողոմքոր ձայնով ասաց Կատարինէն։

—Ինչու չը պէտք է հրաւիրես, քանի որ նոքա գլխովդ պտոյտ են գալիս և դու օր չի անցնիլ համարեա որ նոցա տունը չը գնաս։

—Շատ օրիորդներ են լինելու, իսկ պարող տղամարդիկ չկան... չեմ իմանում ինչ անեմ... Շատ անյարմար կը լինի։ Գէորգ, հոգիս, թոյլ չե՞ս տալ Տրունիցկուն հրաւիրեմ։

Սահառունին զարմացած լուռ նայում էր կնոջ վերայ։ Կատարինէն շւարած կանգնած էր։ Թէև նա գիտէր, որ չի կարելի մար-

դուն այդպիսի խնդիրքով դիմել, բայց այնքան սաստիկ ցանկանում էր ուրիշներին շլացնել իւր երեկոյթով, որ սիրտ արեց ու ասաց։

—Հաւատացիր, որ ես իմ զարմուհեանս համար չեմ աշխատում... Նա մեզնում ամենալաւ պարոգ և առհասարակ... ճարպիկ կաւալեր է համարւում... այնպէս որ... երեկոյթը աւանց նորան ամենքին ձանձրալի կը թուի, դժուարութեամբ կարողացաւ արտասանել Հեղինէն գլուխը քաշ գցած։

Կնոջ խնդիրքը կատարելը շատ ծանր և վիրաւորական էր Սահառունու համար, բայց նա աւելի լաւ համարեց զիջել։ Նա վախենում էր, կնոջ խնդիրքը մերժելով, աւելի բորբոքի նորա սէրը։

—Եթէ այդքան ուզում ես որ նա դայ, ես արգելք չեմ լինի, կիսաբերան պատասխանեց Սահառունին ու երեսը շուռ տուեց նորանից։ Զը նայելով որ նա աշխատում էր ծածկել իւր մէջ կատարուող ներքին կռիւը, ձայնը մի քիչ դողաց։ Կինը այնքան ուրախացաւ մարդու թոյլտուութիւնը ստանալով, որ այդ չը նկատեց և շնորհակալութեան զգացմունքով բռնեց նորա ձեռքը։

—Կարելի՞ է, հա՞։ Գէորգ ջան, ո՛րքան բարի ես։ Պարոններ չ՚ունէինք, բայց նա տասը պարոնի տեղ կը բռնի, իրան կորցնելով ասաց Կատարինէն ու նստեց հրաւիրատոմսեր գրելու։

XVI

Կատարինէի ծննդի օրն էր։ Ամեն պատրաստութիւններ տեսնուել էին երեկոյթի համար։ Ծամի 8-ին Կատարինէն պատուիրեց բոլոր սենեակների ճրագները կպցնել և զուքուած—զարդարուած ու ինքնագոհ ժպիտն երեսին սկսեց ման գալ սենեակից սենեակ ու պատուէրներ տալ։ Հիւրերին ընդունելու համար բոլոր կարգադրութիւնները անելուց յետոյ, նա նստեց տախտի վերայ հանգստանալու. Նորա երևակայութեան մէջ արդէն պատկերանում էր երեկոյթը, Նորա սիրտը հիմիկուանից փառաւորում էր երևակայելով թէ որքան կ՚ուրախանան ընկերուհիները պատահելով Նորա տանը Ցրունիցկուն։

Կատարինէի հիւրասենեակը արևելեան ճաշակով էր սարքուած։ Ասիական նախշերով պատուանները ու վարագոյրները շատ համապատասխան էին սենեակի չորս կողմը դրուած ցած թախտաձև բազմոցներին. գեղարուեստական անկարգութեամբ ցիրուցան գցած հազար

ու մէկ վառ գոյներով բարձերը կարծես մարդու հրաւիրում էին հանգիստ առնելու. պատերը զարդարուած էին ասիական զէնքերով. դարակներում շարուած էին ոսկէ ու արծաթէ իրեղէններ։ Բոլորը միասին շատ ներդաշնակ տպաւորութիւն էին գործում մարդու վերայ. աւելի ևս սաստկանում էր տպաւորութիւնը առաստաղից կախուած լապտերի վարդագոյն ճառագայթների լուսով։

—Միայն քե՛զ չի դուր գալիս, Գէորգ, իմ հիւրասենեակը, գլուխդ մի բան է մտել, թէ մարդու տրամադրում է հեշտասիրութեան ու ծուլութեան, ասաց Կատարինէն, ուրախ-ուրախ դիմաւորելով առաջին հիւրերին՝ օրիորդ Միհրանովաներին ու Աննա Գուրգէնեանին։

—Գիտէք ով կը լինի այսօր մեզ մօտ, խորհրդաւոր կերպով ասաց նրանց տանտիկինը։

—Ո՞վ կը լինի, ասա, Կատեա ջան, մի որ և է cavalier galant, չէ՞, անհամբերութեամբ սպասելով պատասխանի միաբերան հարցրեցին նորան օրիորդները։

—Չը լինի՞ Տրունիցկին է, ուրախ-ուրախ հարցրեց Նադեան և նորա կարմիր երեսը աւելի ևս կարմրատակեց։

Կատարինէն հովհարով խփեց նորա քթին ու վազեց դիմաւորելու նոր հիւրերին։

Օրիորդները սկսեցին տաք-տաք խօսել ու վիճել Տրունիցկու մասին։

—Ի՞նչ անսպասելի նորութիւն էր, ո՛րքան ուրախ կ՚անցնի երեկոյթը, իսկ ես կարծում էի, թէ մարդ, բացի Թօմաևներից ու Պետրօսոփներից, Կատարինէի մօտ ոչ ոքի չի պատահիլ, ուրախ-ուրախ ձեռները իրար խփեց կարմրաթշիկ գեղեցկուհին։

—Ի՞նչպէս ուրախացան բոլորը, կարծես մի երևելի բան իմացան, արհամարհանքով նկատեց Սօֆիա Միհրանովան ու վեր քաշեց ուսերը։

—Ճիշտ որ, Սօֆիա, ուրիշները կը կարծեն, թէ մեզ յայտնեցին որ Ցիւրիխ ենք գնալու, հա՛, հա՛ հա՛։ Միթէ՞ այժմ կարելի է բացի Ցիւրիխից ուրիշ բանով հետաքրքրուել, ձեռ առաւ քրոջը Նադեա Միհրանովան և, թևն անցնելով Գուրգէնեանի թևը, քաշեց տարաւ նորան՝ հանդերձասենեակը։

—Գիտե՞ս, Սոֆիա, Պետերբուրգում թույլ են տալու կանանց լսել բարձրագույն ուսումնարաններում, հազորդեց նրան օրիորդներից մեկը։

—Ես առանց ձեզ վաղուց գիտէի այդ։ Զարմանալի է, mesdames, թէ որքան ուշ են հասնում ձեզ այդպիսի տեղեկութիւնները։

Այդ ասելով Սոֆիան կարեկցաբար նայեց օրիորդներին։ Նա սրտանց ցաւում էր նոցա։ Օրիորդները հուհռացին ու փախան։

—Ախ, եթէ իմանայի որ նա կը լինի... ինչ անպիտան շոր եմ հագել, սկի չի սազում ինձ, ասաց Նադեա Միհրանովան կուլեալով հանդերձարանում պատէ հայելու (տրիումֆ) առաջ։

—Ընդհակառակը դու՝ ինչպէս միշտ՝ ամենից լաւ ես հագնուած և շատ սիրուն ես այսօր։

—Ձի՞շտ։ Օ՛յ, դո՛ւ այդ ի՞նչ շոր ես հագել, Աննա, կուզե՞ս գնանք տուն, շորերդ փոխիր։

—Չէ մի ինչ, ծիծաղեց Գուրգէնեանը։ Կարծում ես ամենքն էլ քեզ նման հետաքրքրուում են Տրունիցկով։

—Գիտես, մի քանի ժամանակ է նա ամեն օր լինում է մեր տանը, էլ ասել չի լինի թէ որքան ուրախ է անցնում ժամանակը նորա հետ։

—Երևակայում եմ, արհամարհանքով ժպտաց Գուրգէնեանը։

—Խօսքը մեր մէջ մնայ, նա սառել է դէպի Կատեան, իսկ նա խեղճը սկի չի էլ նկատում այդ։

—Խե՛ղճը, հը՛մ... դու շատ մեծ նշանակութիւն ես տալիս այդ փքուած ու դատարկ ֆրանտին։

—Ի՞նչ, քո կարծիքով Սահառունին ու Թոմաևը նորանից լաւ են, չէ՞, զրգռուած կտրեց նորա խօսքը Նադեան։ Ա՛յ, իսկը փքուած նոքա են։ Ես անկեղծ ցաւում եմ խեղճ Կատեային, մարդը նորա ճկոյթին էլ չ՝արժէ։

Հանդերձարանը եկան ուրիշ կանայք և խօսակցութիւնը փոխեցին։

Ժամի տասին Սահառունիների ճաշակով զարդարուած մեծ դահլիճում սկսեցին դաշնամուր ածել ու պարել։ Տանտէրն ու տանտիկինը անհանգիստ էին. նոցա աչքը դրան վերայ էր. ինչպէս երևում էր՝ երկուսն էլ հետաքրքիր հիւրերի էին սպասում։

Երևի նա մարդու պատճառով է ուշանում, մտածեց Սահառունին։

Ինչպէս՝ երևում է, ներկայացումը վերջանալուց յետոյ կը գայ, հանգստացրեց ինքն իրան Կատարինէն ու նշանով կանչեց իւր մօտ Ասունուն։

—Մինչև Տրունիցկու գալը, Ալեքսանդր Վասիլիչ, դուք պէտք է կառավարէք պարերը։

—Ի հարկէ դուք պէտք է կատարէք այդ պարտականութիւնը, հօ Թոմասեանին չենք խնդրելու որ կառավարի, ծաղրելով նկատեց Նադեան։

Ամենքը աչքները դարձրին Թոմասեի վերայ։ Նա թէև այդ նկատեց, բայց, ինչպէս երևում էր, առանձին նշանակութիւն չը տուեց դրան և չը փոխեց իւր սովորական դիրքը։ Ձեռները գրպանը դրած ու գլուխը յետ գցած, նա մնաց այդ կիսաթեք ընկած դրութեան մէջ. երբեմն միայն նա բարձրանում նստում էր ծխագլանակը կըպցնելու համար։

—Ափսո՛ս, այդքան սիրուն ու ջահել է և այդպէս անհոգ ու անուշադիր է դէպի իւր արտաքինը. այդ նրան անհամակրելի տեսք է տալիս, արհամարհանքով ասաց Նադեա Միհրանովան Աննա Գուրգէնեանի, հետ նորա մօտով անցնելիս։

Թոմասեը լսեց այդ և նորա անվրդով դէմքի վերայ մի րոպէ երևեց բարեհոգի քմծիծաղ, որով առհասարակ մեծերը պատասխանում են երեխաների թոթովանքին։

—Նա այնքան լաւ յատկութիւններ ունի, որ այդ պակասութիւնը բոլորովին աչքի չի ընկնում, չարացած պատասխանեց Աննա Գուրգէնեանը, երբ որ նոքա մտան միւս սենեակը։

—Դէ, Ասունի, սկսեցէք ձեր գործը, հրաման արձակեց այդ ժամանակ տանտիկինը և ոտը խփեց գետնին. յետոյ մօտեցաւ Թոմասեին և, յանդիմանօրէն նայելով նորա վերայ ոտից մինչև գլուխ, բացականչեց.

—Էլի գզգզա՛ծ։

Թոմասեը մի քիչ բարձրացաւ, նստեց տեղումը։

—Դէ, շուտ արէք, վեր կացէք, պէտք է այս կադրիլը պարէք։

—Յետոյ, Եկատերինա Իւանովնա, այժմ ինձ հանգիստ թողէք, այնպէս թախանձելով ասաց Թոմասեը, որ տանտիկինը թողեց նորան ու անցաւ միւսներին։

Կադրիլի ժամանակ եկան Ամիրանովն ու կինը և մի քանի բոպէ գրաւեցին բոլորի ուշադրութիւնը։

—Ի՞նչ սիրունացել էք, Ելենա Պաւլովնա, նկատեց մի հասակաւոր կին՝ մի բոպէ աչքը խաղաթղթից բարձրացնելով։

—Ինչու չի սիրունանալ, իւր համար թագուհու պէս ապրում է, ոչ մի բանի ձեռք էլ չի տալիս, հազիւ լսելի ձայնով արտասանեց թամարը, որ անկիւնում նստած ինքն իրան կտրատում էր, որովհետև համարեա ոչ ոք ուշադրութիւն չէր դարձնում նորա վերայ։

Նրանից մի քիչ հեռու նստած էր Եփեմիան և քչփչում էր երկու հասակաւոր կանանց հետ։

—Այս էլ Միխայիլ Պետրովիչը, ասաց նոցանից մէկը վեր կենալով տեղիցը։

Ինչո՞ւ այսքան ուշ եկաք։

—Գործ ունէի, անհոգ կերպով պատասխանեց Ամիրանովը, ուշադրութեամբ աչք ածելով չորս կողմը թղթախաղի ընկեր գտնելու համար։

—Խե՛ղճ եղբայրս առաւօտեանից մինչև երեկոյ դադար չունի, իսկ կնոջ սկի հոգն էլ չի. պէտք է իմ հանգուցեալ ամուսնիս նման մարդու պատահած լինէր, որ կակուղ մոմ դարձնէր։

—Դուք՝ կարծեմ՝ առաջ ձեր եղբոր մօտ էիք ապրում, Եփեմիա Պետրովնա։

—Հա, բայց հարսս վարպետութեամբ մեզ տանից քշեց, շարացած ասաց այրին։ Կ՚ուզէի մի Միխայիլ Պետրովիչը՝ շատ չէ՞ մի անգամ մտնէր խոհանոցը տեսնէր, թէ ինչ Սողոմ-Գոմոր է այնտեղ. բոլոր հարևանների ծառաները այնպէս են մտնում-դուրս գալիս, ուտում-թափում, կարծես իրանց տունը լինի։ Մէկ-մէկ որ յետևի դռնիցը մտնում եմ եղբօրս տունը ու այդ բոլորը տեսնում, սիրտս այրւում խորովւում է։

Եփեմիային էլ հէնց այդ էր պէտք. նոր մարդ էր ճանկել, որ ուրախութեամբ լսում էր իւր ասածը. աչքերը խփեց, բերանը բաց արեց ու սկսեց բամբասանքների տոպրակը թափ տալ։ Մօտի նստող կանայք ուշադրութեամբ ականջ էին դնում, պաշար էին հաւաքում, որ միւս օրը իրանց ծանօթներին պատմեն։

—Այս էլ ձեզ Ելենա Պաւլովնան, ասաց նոցանից մէկը, նկատելով Հեղինէին, որ մօտեցաւ նրանց։

Եփեմիան մի ակնթարթում սրսկեց ու քաղցր արտայայտութիւն տուեց դէմքին։ Հեղինէն սառը-սառը բարևեց տալին ու կողքին նստած կանանց. նոցա աչքերին նայելով, նա տեսնում էր թէ ինչպէս են վերաբերում իրան։

Այդ ժամանակ ածեցին կադրիլի բետուրնէլը. շուտով պէտք է սկսէր պարը, մի քանի երիտասարդներ մօտեցան Հեղինէին և տարան դահլիճը։

—Բարև, Դաւիթ Աբրամիչ, ողջունեց Հեղինէն, անցնելով Թոմաեւի մօտով։

Կատարինէն մօտեցաւ Հեղինէին։

—Անտանելի մարդ է, Հեղինէ, ասաց Կատարինէն անհամբերութեամբ ձեռները իրար խփելով. երևակայեցէք, ամբողջ երկու ժամ է՝ մի տեղ մեխուած նստած է։

Ուրեմն պէտք է զուռով տեղիցը վերկացնել, ժպտաց Հեղինէն։ Սոֆիա Միհրանովան կաւալեր չ՚ունի, գնացէք խնդրէք որ գայ պարի, դէ՛, շուտ արէք։

—Մեղք եկէք ինձ, տիկին Հեղինէ, ականջներս կը տանի, այնքան կը խօսի։ Աւելի լաւ է ինձ համար թղթախաղի ընկեր գտնէք։

—Լա՛ւ, ինքը փաշայի նման նստի, իսկ մենք մանգանք նորա համար ընկեր գտնենք, ո՞նց չէ, սպասեցէք, ծիծաղեցին Կատեան ու Հեղինէն։

—Մա՛րշ, եկէք իմ յետևից, հրամայեց Կատարինէն։

Թոմաեւի դէմքի վերայ բարեհոգի ժպիտ երևաց, նա սիգարի քնթուկը գցեց գետին ու անսիրտ կերպով հետևեց տիկիններին։ Հեղինէն տարաւ նորան Գուրգէնեանի մօտ։

—Ա՛յ ձեզ պարընկեր, ասաց նա Թոմաեւին, խորհրդաւոր կերպով ժպտալով։

Թոմաեւի երեսը ուրախութիւնից փայլեց։

—Միթէ՞ դուք պարել գիտէք, զարմանալով և միևնոյն ժամանակը ուրախանալով հարցրեց օրիորդը։

—Որքան համբերութեան պաշար ունէք, Աննա Արտեմիեւնա, այժմ գործ դրէք, դուք պէտք է ինձ սովորեցնէք, իսկ ես ձեզ առաջուց ասում եմ որ աչքաբաց աշակերտներիցը չեմ։

—Մի վախենաք, ես խստապահանջ չեմ, աշխուժով պատասխանեց Գուրգէնեանը և գնաց իւր համար աթոռ բերելու։

Ձե՞ս ամաչում, Դաւիթ, օրիորդի համար մի աթոռ էլ չը կարողացար գտնել, ձեռ առաւ Նորան Ասունին։

—Ա՛խ, ճիշտ որ, սկի միտքս չէր, որ ես պէտք է Նորա համար աթոռ գտնէի, կոտրուելով ասաց Թոմաեանը։

Մինչդեռ նա տարակուսած չէր իմանում ինչ անի, Ասունին վազ տուեց Գուրգէնեանի մօտ, ձեռիցն առաւ աթոռը ու դրեց Թոմաեանի կողքը։

—Կուզէք մարդ կը բռնեմ, որ պարող բոլոր զոյգերը Տրունիցկու մասին են խօսում, ասաց Աննան, նստելով Նորա մօտ։ Մարդ իմանայ, թէ ինչու է նա այդպէս կախարդիչ կերպով ազդում մեր տիկիններից ու օրիորդներից շատերի վերայ։

—Պատճառն այն է, Աննա Արտեմիեւնա, որ մեր հասարակութեան մէջ կոկուած, տաշուած ու ճարպիկ կաւալերներ հազւագիւտ են։

Բոլորը խօսում ու պարում էին։

Չը նայելով որ տանտիկինը ըստ երևոյթին ուրախ էր, ասում խօսում էր, բայց ուշադրութեամբ դիտողը կը նկատէր, որ նա կարծես մի բանի էր սպասում և սաստիկ ուշադրութեամբ ականջ էր գնում փողոցով անցնող կառքերի դռդռոցին։ Նա սպասում էր Տրունիցկուն և, քանի գնում էր, նորա անհամբերութիւնը աւելի ու աւելի սաստկանում էր։ Օրիորդներն էլ շուտ-շուտ հարցնում էին, թէ ինչ եղաւ Տրունիցկին, ինչու է ուշանում։ Բայց ահա կարծես մի կառք կանգ առաւ տան մօտ. Կատարինէն բաց պատուհանից դուրս նայեց և ուրախութիւնից փայլող դէմքով ինչ-որ քչփչալով ասաց կողքի կանանց։

Հիւրասենեակում ու դահլիճում հիւրերի մէջ քչփչոց բարձրացաւ, ինչպէս լինում է առհասարակ, երբ որ սպասում են շատ նշանաւոր կամ մի որև է պատճառով հետաքրքրաշարժ հիւրի։ Տրունիցկին մնաւ ուռած-փքւած, աչքերը կուչ ածելով նայելով մէկ աջ մէկ ձախ, կարծես ասելիս լինէր՝ տեսէք որքան մեծահոգի եմ ես, որ ձեզ արժանացնում եմ իմ տեսութեանը։

—Օ՛հ, m-lle Nadine, յանկարծ կանգ առաւ նա, դո՞ւք էլ

այստեղ էք, չեմ կարող ասել, թէ որքան ուրախ եմ, որ ձեզ այստեղ տեսնում եմ։

Տրունիցկու գլուց յետոյ Կատարինէն ուրախութիւնից ոտների վերայ պար էր գալիս. բոլորն էլ աւելի աշխոյժ ստացան. պարերը տաքացան. օրիորդները սրտատրոփ սպասում էին թէ նոցանից ում կը գերադասի Տրունիցկին, տիկինները աչքերը ոլոր-պտոյտ տալով կարծես խնդրելիս լինէին որ իրանց հաճոյախօսութիւններ ասի։

Իսկ նա, առանց մի նկատելի պատճառի, ոմանց բախտաւորացնում էր իւր ուշադրութիւնով, միւսներին անուշադիր էր թողնում արհամարհական անտարբերութիւնով։

—Երանի՛ քեզ, Նադեա, ինչ շատ է քեզ հետ պարում, քչփչացին նորա ականջին մի քանի օրիորդներ։ Նադեան հպարտհպարտ գլուխը բարձրացրեց և ժպտալով ինչ-որ ասաց Տրունիցկու ականջին։ Նա պատասխանեց պինդ սեղմելով Նադեայի ձեռքը և այնուհետև համարեա ամենևին չէր հեռանում նորանից։

Կատարինէն դաղուած սրտով դուրս եկաւ դահլիճից անխնայ կերպով կրծոտելով հիանալի քանդականկար հովհարը։ Դրան մօտ նա պատահեց Սուսնուն, որ հեգնօրէն ասաց նրան։

—Հը՞, այժմ բախտաւո՞ր էք զգում ձեզ։

—Ի՞նչ է. ինչպիսի հակառակորդ է, որ ուզենայ հօ ձեզ գրպանը կը դնի։

—Ի հարկէ, մեր ի՞նչ բանն է առաջնակարգ ասաղի հետ մրցել։

—Mesdames և messieurs, կարգադրում էր Նադեա Միհրանովան, հաւաքուեցէք մի տեղ, Աղոլֆ Անդրէիչը մի նոր խաղ է գտել։

Բոլորը կիսուեցին Տրունիցկու գլխին։ Նա մի կենտրոն էր կազմում, որի շուրջը ամենքը ծիծաղում, կատակ էին անում ու աշխատում էին նորա աչքը մտնել։

Միայն Կատարինէի քէֆը կարծես լաւ չէր։

—Պէտք է ասած, այստեղ շատ ուրախ է, ես չէի կարծում որ այսպիսի հասարակութիւն կը լինի ձեր մօտ, յանկարծ նորա ականջին հասաւ ծանօթ ձայնը և նորա աչքերը կանգ առան Տրունիցկու վերայ։ Նա չէր կարող չը նկատել Կատարինէի վրդովմունքը և իսկոյն աշխատեց մխիթարել նորան։

—Ma belle Catherine, partont—et toujours vous êtes la perle de la société!

Կատարինէի դէմքը մի ակնթարթում փայլեց ուրախութիւնից և, մի բոպէ չ՝անցած, նա արդէն յաղթական ժպիտով նայում էր իւր շուրջը։

Այդ ժամանակ նրանց մօտեցաւ Սահառունին և նկատեց կնոջը, որ նրան ինչպես է այդքան շատ պարել։

—Լաւ, Գէորգ, էլ չեմ պարիլ։

Մէկ—երկու քայլ հազիւ էր փոխել Սահառունին, Տրունիցկին հեգնական ժպիտով նայեց Կատարինէի վերայ։

—Հը՞, չը լինի Օթելլօյի նախանձը շարժւել է։

—Չէ՛, նա քիչ ու միչ բանից տեղեկութիւն ունի, բայց զարմանալի է՝ բաւական հանգիստ պահեց իրան իմանալուց յետոյ։

Տրունիցկու սրտովը չեկաւ այդ նորութիւնը։ Նոցա մէջ լռութիւն տիրեց, երևում էր, որ նա ինչ որ մտքումը վճռում էր։

—Չէ՛, էլ չի կարելի շարունակել, պէտք է Կատարինէի հետ հաշիւներիս վերջ տալ, հազիւ լսելի ձայնով ասաց նա ինքն իրան ու արագ վեր թռչելով տեղիցը մօտեցաւ Նադեա Միհրանովային։

Կատարինէի նախանձը շարժւեց. մի բոպէ ամեն բան և ամենքին մոռանալով նա սկսեց մեքենայաբար այս ու այն հիւրին մօտենալ, խօսել։ Ո՛րքան ճիգ և ուժգնութիւն պէտք է գործ դնէր նա իւր վերայ՝ տանտիկնոջ գերը կատարելու և սիրտը տակն ու վերայ անող զգացմունքները զսպելու համար։

Անգիտակցաբար կանչելով իւր մօտ Աստնուն, նա նորա հետ գնաց առանձնասենեակը, որտեղ, մի փոքրիկ սեղանի մօտ նստած, խօսում ու վիճում էին երեք օրիորդ։

—Ինչո՞ւ, mesdames, ամբողջ երեկոն մի կողմ քաշւած, չէք ուզում մասնակցել պարերին։

—Դուք մոռանում էք, Եկատերինա Իւանովնա, որ պարերը հասարակ մահկանացուների համար են, իսկ նոքա, որոնք զբաղւած են վսեմ զաղափարներով...

—Որ դուք անընդունակ էք հասկանալու, բարկացած կարեց նորա խօսքը Սոֆիա Միհրանովան։ Ճիշտ, միթէ՞ անկիւնից-անկիւն պտոյտ գալուց լաւ պարապմունք չի կարելի գտնել։

—Զարմանալի է թէ ինչ բաւականութիւն են զգում յետ ու առաջ գնալուց և գլխապատառ վազ տալուց, վերայ բերեցին միւս երկուսը։

—Ի հարկէ ոչինչ։ Հաւատացէք, mesdames, որ ես շատ համակրում եմ ձեր ցանկութեանը, որ ուզում էք մեր պարապմունքներին աւելի լուրջ ուղղութիւն տալ։

—Լռեցէք, Սուսնի, աւելի լաւ կ'անէք օրիորդներին ընթրիքի հրաւիրէք, անհամբերութեամբ նկատեց Կատարինէն ու քայլերն ուղղեց դէպի սեղանատուն։

—Թոյլ տուէք, mesdames, ձեզ կաւալերութիւն անել, առաջարկեց սիրալիր կերպով Սուսնին։ Ի՞նչ գեղեցիկ էք այսօր, ում չի յայտնի, որ պարզութիւնը կնոջ ամենալաւ զարդարանքն է։

—Ալեքսանդր Վասիլիչ, դուք, ինչպէս երևում է, երբէք չէք ուզղուիլ, ծիծաղելով միաբերան բացականչեցին օրիորդները և Սուսնու հետ գնացին սեղանատուն ու նստեցին մի սեղանի մօտ։

—Նոր լուր լսե՞լ էք, mesdames, բոլորիս ծանօթ Մարիա Բոգդանովնան մարդու մօտից մի գնդապետի հետ փախել է, հաղորդեց իւր սեղանակիցներին Սուսնին։

—Մի՞թէ, աչքերը չռելով բացականչեցին երկու պառաւ։

—Ինչո՞ւ չէիք մինչև այժմ այդ լուրը մեզ ասում, Ալեքսանդր Վասիլիչ, երևի դուք ուրիշ նոր բաներ էլ իմանալիս կը լինէք, տոպրակներիդ բերանը բաց արէք, ասաց տանտիկինը հիւրերին, խնդրելով տեղ բռնել սեղանի մօտ։

—Օ՛յ կինարմատներ, ձեզ հաց ու ջուր չը տան, նոր լուրեր միայն հաղորդեն, ասաց Ամիրանովը նստելով սեղանի մօտ։

Այդ նկատողութիւնը առանց պատասխանի մնաց, որովհետև կանանց ուշքը գրաւել էր Սուսնին, որ նոր լուրեր ու ասէկոսէներ էր որ հաղորդում էր շրջապատողներին։

—Ահա ձեզ, Եկատերինա Իւանովնա, մի նոր լուր pour la bonne bouche, M-lle Սաշինկան այս առաւօտ բացասել է իւր փեսացուին։ Դէ, հիմա դուք խօսելու, դատողութիւն տալու բաւական նիւթ ունէք, խնդրեմ ինձ հանգիստ թողնէք, ես դեռ ոչինչ չեմ կերել։

Այդ երկու հետաքրքրական լուրերը բերնից բերան անցնելով

գրաւեցին բոլորի ուշադրութիւնը, մանաւանդ պառաւների, որոնք ամբողջ երեկոն թղթախաղով զբաղելուց յետոյ՝ մեծ ցանկութիւն ունէին լեզուները մի քիչ բանացնել։

Իսկ Տրունիցկին, նստած մի փոքրիկ սեղանի մօտ, ասում խօսում էր. բերանը կարծես ծաղրածութեան ու երկդիմի սրախօսութիւնների անսպառ աղբիւր լինէր. շրջապատողները մի բերան ծիծաղում էին։

—Ձեր կենացը, Աղոլֆ Անդրէիչ, ուրախութիւնից ա՛լ վարդի նման կարմրատակած դիմեց նրան Նաղեա Միհրանովան և բաժակը կպցրեց բաժակին։

Նորա օրինակին հետևեցին միւս օրիորդներն էլ։

—Մեր գեղեցիկ տանտիկնոջ կենացը, առաջարկեց Տրունիցկին ոտքի կանգնելով։

Թնդաց բարձր «ուռռա՛»։

Ուրախ երեկոյթից ու ընթրիքից յետոյ հիւրերը ժամի երեքին ցրուեցին իրանց տները լաւ տրամադրութեան մէջ, ամենքն էլ հեռանալով այն համոզմունքով, որ Կատարինէից աւելի սիրալիր և քաղցր տանտիկին չկայ ամբողջ քաղաքում։

XVII

Կատարինէի սիրտը երեկոյթից յետոյ շատ տխուր էր։ Օր օրի վերայ նա աւելի և աւելի էր համոզւում, որ Տրունիցկին սառել է դէպի ինքը, և որքան աւելի հաստատւում էր նորա մէջ այդ համոզմունքը, այնքան աւելի բորբոքւում էր նորա սէրը դէպի Տրունիցկին։ Նա դեռ յոյսը բոլորովին չէր կտրել, կարծում էր որ վաղ թէ ուշ նա մ ե ղ ա յ կը գայ, բայց ահա արդէն անցել էր մի ամիս, իսկ նա զղջալու նշան ամենևին ցոյց չէր տալիս։ Եթէ որ Տրունիցկին մոռանար նորան ու հեռանար Թ-սից, Կատարինէն գուցէ շատ էլ դարդ չանէր, բայց նորա համար անտանելի էր տեսնել, որ Տրունիցկին հետաքրքրւում է ուրիշ կնոջով, անուշադիր է թողնում իրան, ուրիշին գերադասում է և այդ՝ բոլոր ծանօթների աչքի առաջ։

Մօտենում էին երկհոգիսութեան վերջին ամիսները։ Կատարինէն յուսահատութիւնից գժւում էր նկատելով որ երեսի գոյնը կորցնում է իւր թարմութիւնը, աչքերը փոս են ընկնում և կախ ընկած

այտերի փոսերը էլ առաջուայ պէս մարդու խելքամաղ չեն անում, իսկ իրանը, չը նայելով շոր կարողների գործ դրած հազար ու մէկ խորամանկութիւններին, կորցնում է իւր նազուկութիւնը ու գեղեցկութիւնը։

Տրունիցկին ծածուկ ծիծաղում էր Կատարինէի վերայ և յաճախ ասում էր ընկերներին.

—Իմ թառամած գեղեցկուհուս համար արդէն ժամանակն եկել է պաշտօնաթող լինելու ու տեղը մի ուրիշին զիջելու։

Մի անգամ, պատահելով Կատարինէին իւր հօրեղբօր աղջկայ մօտ, նա մի սուր նկատողութիւն արեց նորա ոչ շատ գեղեցիկ տեսքի մասին։ Կատարինէի սրտին այդ սաստիկ դիպաւ։ Նա չը կարողացաւ իրան պահել, դուրս եկաւ պատշգամբը և սկսեց բարձրաձայն հեկեկել։ Սաստիկ զայրացած վերադարձաւ տուն Կատարինէն։

—Եւ ո՞ւմ հետ փոխել ինձ, մի յիմար տիկինի հետ, որ Նադեա Միհրանովնա է անուանւում, զայրացած մտածում էր նա և այդ րոպէից նա սկսեց ատել Նագիային։ Հա, ես արհամարհում եմ նորան, էլ ես ոտք չեմ դնի նոցա շեմքը, նենգաւո՛ր ընտանիք։ Բայց եթէ նա իսկապէս ինձնից սառած լինի՞։ Ո՛րքան գեշացել ու պառաւել եմ, յուսահատութեամբ արտասանեց նա նայելով հայելուն։ Ինչ թշւառ արարած ենք մենք, կանայք, մի պատահական բան բաւական է մեզ անբախտացնելու համար։ Կարծես կնճիռներ էլ լինեն երեսիս, համարեա զարհուրելով բացականչեց Կատարինէն նորից նայելով հայելուն։

Դեռ երկար ժամանակ այդպէս կանգնած հայելու առաջ՝ Կատարինէն դարդ էր անում մտածելով իւր կորցրած գեղեցկութեան վերայ։

Սահաւունին նկատում էր կնոջ դրութիւնը և հասկանում էր բոլորը, բայց հարկաւոր չէր համարում ցոյց տալ կնոջը թէ ինքը նկատում է։ Նա գիտէր որ իւր միջամտութեամբ աւելի կը բորբոքի նորա սէրը և ասում էր ինքն իրան,—Տրունիցկուն մոռանալ տալու ամենալաւ միջոցն այն է, որ թողնեմ կինս ինքն իրան ճանաչի նորան ու տեսնի թէ ինչ պտուղ է նա, կարծեմ նա արդէն սկսել է ձանձրանալ կնոջից։

Կատարինէի վրդովմունքը օրէցօր աւելի ու աւելի սաստկանում էր։ Նա ընկել էր սաստիկ մտատանջութեան մէջ. նորա սրտում

ծագած կասկածը թէ Տրունիցկին սառել է դէպի ինքը, հետզհետէ աւելի ու աւելի զօրանում ու հաստատուում էր, վերջապէս նորա համբերութիւնը հատաւ, վճռեց բացատրութիւն պահանջել Տրունիցկուց և ուղարկեց նրան մի յուսահատական նամակ։ Տրունիցկին պատասխանեց նորան, թէ միւս օրը երեկոյեան ժամի վեցին իրանք կարող են տեսնուել ու խօսել ամարային կրուժոկ ժողովարանում։

Կատարինէի մէջ կատարուած փոփոխութիւնը նկատելի էր նորա բոլոր մօտ ծանօթներին, մանաւանդ սրատես Ասունու համար։ Նա վաղուց էր նկատել Կատարինէի ու Տրունիցկու մտերմութիւնը, բայց սկզբում կարծում էր թէ այդ կանացի կոկետութիւն է մէկի կողմից և անմեղ կատակ միւսի կողմից։ Սակայն շատ չանցած Ասունին տեսաւ, որ նոցա յարաբերութիւնը շատ լուրջ բնաւորութիւն է ստանում, այդ ի հարկէ նորան շատ անհանգստացրեց իբրև Սահառունու անկեղծ և մտերիմ բարեկամի. նա աշխատում էր մի հնարք գտնել այդ յարաբերութիւնների առաջն առնելու և մարդ ու կնոջ մէջ առաջւայ համերաշխութիւնը վերականգնելու։ Հեշտ բան չէր այդ անելը. խնդիրը շատ դժուար ու փափուկ խնդիր էր, պէտք էր շատ զգոյշ լինել։ Ասունին ոչ ոքի ոչինչ չէր ասում ու ինքն իրան մտածում էր թէ ինչ անի իւր բարեկամին օգնելու համար. վերջապէս մի օր մի պատահական դէպք ստիպեց նորան բացարձակ խօսել Տրունիցկու հետ։

Մի օր, Պետրոսեանցի հետ այգում երկար ման գալուց յետոյ, Ասունին առաջարկեց նրան մտնել Եւրոպա հիւրանոցը։ Ճանապարհին պատահեցին Թոմաևին։

—Գնանք, բարեկամ, քէֆ անենք, այսօր ռոճիկս ստացել եմ։

—Դու էլի առաջւանն ես, Ալեքսանդր, դրպանումդ որ մի քանի կոպէկ եկաւ, չես հանգստանայ մինչև որ գլխին քար չը քցես սորանորան հիւրասիրելով։

—Ինչ անեմ, Դաւիթ, ամեն մարդ մի պակասութիւն կ'ունենայ, կաթի հետ ծծածը հոգու հետ դուրս կը գայ։

Պետրոսեանցը չէր ուզում գնալ, բայց ընկերները զօռով քաշ տուեցին տարան։ Վերջին ժամանակները նա շատ վատ տրամադրութեան մէջ էր։ Զգալով թեմական դպրոցում տիրող ինտրիգներից, յոգնելով ամենօրեայ կռիւներից, որ նա պէտք է վարէր եթէ չէր

ուղում քաջալերել գպրոցում կատարուող անարդարութիւնները, նա ստիպւեց թողնել ուսուցչական պաշտօնը, հեռանալ դպրոցից և հա մօտ մի ամիս էր, որ նա պարապ էր։ Ապարդիւն կերպով աշխատելով մի որ և է համապատասխան գործ գտնելու, նա հազիւ էր կարողանում իւր ղլուխը պահել, բաւականանալով հայոց ամենատարածւած լրագրին աշխատակցելու համար ստացած չնչին վարձատրութիւնով։

Խօսելով նոքա հասան հիւրանոցին։

—Տրունիցկին ու ընկերները հօ չե՞ն այդ քէֆ անողները, նկատեց Ասունին, նստելով սեղանատան կողքի սենեակում։

—Աղոլֆ, խմում ենք քո պաշտօնաթող գեղեցկուհու կենացը, լսեց Ասունին և սրեց ականջները։

—Է՛հ, պարոններ, եթէ տեսնէք թէ ինչ նամակ է գրել ինձ la belle Catherine-ը, ծիծաղից կը թուլանայիք։ Խեղճիկը յուսահատութիւնից քիչ է մնում իրան սպանի։

—Ես այսօր նորա լողլող մարդուն տեսայ, նկատեց Տրունիցկու ընկերներից մէկը խռպոտ ձայնով։

—Դու, Աղոլֆ, ժամի վեցին տեսակցութիւն ես նշանակել, թոյլ կը տա՞ս մեզ թփերի յետևը կանգնենք ձեր տեսակցութեան ժամանակ, հռհռալով աւելցրեց մի ուրիշը։

—Ուրախութեամբ, անուշադիր կերպով պատասխանեց կիսահարբած Տրունիցկին։

—Լսէք, պարոններ, չը լինի թէ այդ լրբերը տիկին Սահռունու մասին են խօսում, չը կարողանալով էլ համբերել զայրացած բացականչեց Պետրոսեանցը։

Ասունին ու Թոմաևը, որոնք նորանից պակաս չէին զայրացած, գլխով դրական նշան արեցին։

—Ինչ էլ լինի, չպէտք է թողնենք, որ նոքա այդ մարսեն, մաղձոտութեամբ բացականչեց Պետրոսեանցը ու պինդ խփեց բռունցքով սեղանին։

Մինչդեռ Ասունին ու Պետրոսեանցը կատաղած մտեցան դրանը ու պատուիրեցին ծառային որ դուրս կանչի Տրունիցկուն մի շատ կարևոր և շտապ գործի համար, Թոմաևը մնաց անշարժ նստած, աչքերը յառած «Կաւկազ» լրագրի վերջին համարի վերայ և մտա-

ծում էր թէ ինչպէս անեն այդ դէպքում, որ Կատարինէն չը խայտառակուի։

—Ի հարկէ Կատարինէի ու Տրունիցկու յարաբերութիւնները նորանից ծածուկ մնալ չէին կարող, բայց նա ոչ մի ակնարկով անգամ ոչ ոքի չէր յայտնում իւր դիտածը և առհասարակ աշխատում էր իրան հեռու պահել այդպիսի դէպքերում։

—Ասա տեսնենք, Տիգրան, ընդհատեց նա լռութիւնը, ի՞նչ ես ուզում անել։

—Այն, ինչ որ կանի ամեն մի մարդ, որի երակներում արիւն է հոսում և ոչ թէ ջուր։

Այդ խօսքերը արտասանելիս Պետրոսեանցի աչքերից կրակ էր թափւում։

—Գիտէի որ այդ կը լինի դիտաւորութիւնդ. ուզում ես մենամարտութեան հրաւիրել, բայց չէ՞ որ այդպիսով աւելի կը վնասես նորան, ում որ ուզում ես պաշտպանել։ Մեր մէջ տիկնոջը ամենամօտ մարդը Ալեքսանդրն է, նրան կը սազի պաշտպան հանդիսանալ տիկնոջը, թող նա խօսի այդ լրբի հետ։

—Ճիշդ է ասում, ես պէտք է խօսեմ նորա հետ։ Տիգրան, մեր խաթեր քեզ զսպիր, մի խօսիլ նորա հետ։ Թէև շատ գժւար է սառնասիրտ մնալ, բայց ինչ արած, դու ինքդ պէտք է հասկանաս որ այժմ այդ անհրաժեշտ է։

—Պէտք է, պէտք է, մտահոգութեամբ հաստատեց Թոմաեւը, թէ չէ խայտառակ բան դուրս կը գայ։

Այդ ժամանակ շտմքի վերայ երևաց Տրունիցկին։

—Ի՞նչ էք կամենում։

—Ուզում եմ ձեզ հետ առանձին խօսել։

—Օհո՞, այդ շատ հետաքրքրական բան պէտք է լինի, ես պատրաստ եմ, սկսէք, պատասխանեց Տրունիցկին շորորուելով կանգնած տեղում։

—Ինչպէս տեսնում եմ, դուք այնպիսի դրութեան մէջ էք, որ պէտք է մեր խօսակցութիւնը յետաձգենք աւելի յարմար ժամանակուան, խիստ կերպով նկատեց Աստնին։ Երեկոյեան կը գամ ձեզ մօտ։

Այդ րոպէին միայն կարծես Տրունիցկին հասկացաւ, թէ ինչու համար էին իրան դուրս կանչում, և մի քիչ շփոթուեց։

—Իսկ այժմ ես խորհուրդ կը տայի ձեզ և ձեր սքանչելի սեղանակիցներին լռել, թէ չէ բաներդ վատ կը լինի, ասաց Պետրոսեանցը ատամները կրճատացնելով։ Տրունիցկին արհամարհանքով նայեց նորա թուխ դէմքին ու փութկացրեց։

—Դուք ո՞վ էք։

—Ա՛յ կ՚իմանաք թէ ով եմ, զզւանքով պատասխանեց Պետրոսեանցը և բռունցքները հուպ տալով մօտեցաւ նրան։

Թոմաեւը վրդովւած նայեց Ասունուն ու ինչ-որ փսփսաց ականջին։ Վախենալով խայտառակութիւնից ու չուզենալով վնասել Սահառունուն, նոքա աշխատեցին մի կերպ հանգստացնել Պետրոսեանցին ու երեքով միասին դուրս եկան հիւրանոցից։

—Զարմանում եմ, թէ ի՞նչն էր ստիպում Եկատերինա Իւանովնային ծանօթանալ այդ . . . . . հետ, ա՛յ քեզ լիրբ արարած, արտասանեց Պետրոսեանցը ատամները իրար սղմած։

Պատասխան չը ստանալով, նա սկսեց քթի տակին փնթփնթալ։

Ասունին անհամբերութեամբ սպասում էր երեկոյին։ Նա մի քանի անգամ գնաց Տրունիցկու մօտ, բայց ոչ մի անգամ տանը չը գտաւ նորան. վերջապէս նա վճռեց նստել նորա տանը և սպասել մինչև գայ։

Կէս գիշերւայ մօտ էր, որ Տրունիցկին տուն եկաւ։

—Այդ դո՞ւք էք, պարոն Ասունի։ Բոլորովին մոռացել էի, որ ժամադիր էիք եղել, համեցէք։

—Ես իբրև մօտ բարեկամ ձեզ լաւ յայտնի անձնաւորութեան պահանջում եմ՝ բացատրէք ինձ թէ ինչո՞ւ էք դուք ամէն ջանք դործ դնում վրդովելու նոցա ընտանեկան խաղաղութիւնը։

—Օհո՛, դուք հօ լաւ քարոզիչ կը լինէք, իսկ ես կարծում էի թէ դուք էլ մեզ նման անհոգ քէֆի մարդ էք, բարձրաձայն ծիծաղելով ասաց Տրունիցկին։

Ասունին նայեց նորան արհամարհական հայեացքով և աւելի սպառնալից ձայնով շարունակեց։

—Թոյլ ուէք հարցնել՝ ի՞նչ իրաւունքով դուք համարձակւում էք ծաղրի առարկայ դարձնել այն անձնաւորութեան անունը և խրախուսել ձեր անբարոյական ընկերներին նոյնը անելու։

—Հա՛, հա՛, հա՛, ա՛յ քեզ բան։ Ինչի՞ցն էք եղրակացնում,

այդ ձեզ թուել է միայն։ Ես մեղաւոր չեմ հս որ կանայք աչունքաւոր ճանճերի պէս կպչում են ինձանից։ Համեցէք կարդացէք, rendez-vous են խնդրում ինձանից, պէտք է խոստովանեմ, որ սովորութիւն չունիմ գեղեցիկ սեռի խնդիրքները բացասելու։

Տրունիցկին նենգաւոր ժպիտով մօտեցրեց Ասունու աչքերին Կատարինէից ստացած նամակը։ Նա զայրացած խլեց նորա ձեռքից նամակը ու. կոտոր-կոտոր արեց։ Տրունիցկին շփոթուեց։ Մի քանի բոպէ անցած նա բարկացած յարձակուեց Ասունու վերայ։

—Ինչպէս էք համարձակւում այդպէս ինքնագլուխ, առանց հարցնելու պատռել իմ նամակը։ Գիտէ՞ք թէ ում հետ գործ ունիք։

—Ոչ մի ժամանակ այնպէս լաւ չեմ իմացել թէ ում հետ գործ ունիմ, ինչպէս այս բոպէին. նեղութիւն մի կրէք ինձ բացատրելու թէ ով էք դուք. ձեր զզուելի վարմունքը ակնյայտնի ցոյց է տալիս ձեր ով լինելը։

—Ձայներդ կորէք. ես անպատիժ չեմ թողնի ձեր հանդուգն վարմունքը։ Ի՞նչ իրաւունք ունէիք նամակը պատռելու։

—Այն իրաւունքը, ինչ իրաւունք որ ունի ամեն մի ազնիւ մարդ, որ տեսնում է թէ ինչ... է՛հ, դուք այդ չէք կարող հասկանալ, սաստիկ զայրացած բացականչեց Ասունին և պինդ սեղմեց ձեռքումը պատռած նամակի կտորտանքը։ Ձեր վարմունքը զզուելի է։ Իմացած կացէք, որ հեշտ չէք պրծնիլ, եթէ երբ և իցէ դարձեալ խօսքով կամ գործով կպչէք ձեզ յայտնի անձնաւորութեան պատուին։ Այժմ պատիւ ունիմ ձեզ հրաժարական ողջոյնս տալու։

Ասունին այդ խօսքերը արտասանեց սպառնալից եղանակով ու դուրս եկաւ սենեակից։

Զը նայելով որ ուշ էր, նա գնաց Թոմաեւի մօտ։

Տրունիցկին, որ սովորել էր ամեն բանում յաջողութիւն ունենալ ու դժուարութիւնների չը պատահել, մի քիչ վախեցաւ Ասունու վճռական տոնից ու սպառնալիքներից։

—Գործը վատ ուղղութիւն է ստանում։ Ցանկարծ այդ յիմարն ու իւր սև, երկրաքիթ ընկերը չը բռնեն ու քոթակեն ինձ։ Ինչ ասեմ իմ խելքիս. ես պէտք է առաջուց իմանայի, որ տուեւտական մարդկանց հետ այդպիսի գործ բռնելը մարդու օգուտ չի բերի. նրանք ի՞նչ կարող են հասկանալ մեր ուրախ, քէֆով կեանքի գե-

ղեցկութիւնը, նրանց ասա ամբողջ օրը նստեն ու կոպէկ-կոպէկ փող աշխատեն, նոքա ի՞նչ գիտեն մարդավարի ապրելու եղանակը, մտածում էր ինքն իրան Տրունիցկին, յետ ու առաջ քայլելով իւր սենեակում, որ լիքն էր կանանց ձեռագործներով։

Տրունիցկին երկար ման էր գալիս սենեակում մտահոգութեան մէջ, վերջապէս կանգ առնելով մոտեցաւ.—մի շաբաթ առաջ ես արձակուրդ խնդրեցի ու տուեցին, լաւ պատրուակ է գլուխս առնելու ու այստեղից փախչելու. չը բռնե՞մ հենց վաղը գնամ ու գլուխս աղատեմ ամենքից։ Բայց, մոռացել էի, չէ որ ես վաղը տեսակցութեան պէտք է գնամ. շատ հետաքրքրական է այժմ, կեանքիս վերջալոյսի ժամանակ, տեսնել յուսահատ սէր։ Զէ՛, իսկ եթէ այդ բոլորը սատանայութիւն լինի ու ինձ համար թակարդ լարած լինեն. աւելի լաւ չի՞ լինի փասա-փուսաս հաւաքեմ ու ինձ գցեմ Պետերբուրգ։

—Էյ, բանը-մանը դարսիր ու կապիր, վաղը ճանապարհ պէտք է ընկնեմ։ Հօ ինձ հարցնող չի եղել։

—Ինչ-որ խանութից մի գործակատար էր եկել հաշիւ էր բերել, փող էր ուղում, նորանից յետոյ դերձակն էլ եկաւ, շատ էին գուգռռում։

—Լուիր. քեզ դորա մասին հարցնող չը կայ։ Միհրանովենց տանից ոչ ոք չի՞ եկել։

—Ինչպէս չէ. ա՛յ նամակ էին բերել։

Տրունիցկին ուրախացաւ, առաւ ծաւալի ձեռքից ծրարը ու վռազ-վռազ բաց արեց։ Ծրարի մէջ ներփակուած էր բանկից 300 ր. ստանալու տոմսակ։

Ապրի Ելիզաւետա Բոգդանովնան, նեղ տեղն ընկած ժամանակս շատ է օգնում ինձ։ Այնքան պարտք ունիմ, որ չեմ իմանում թէ ում պարտքը տամ։ Ոչինչ, ոչ ոքի մուրհակ չեմ տուել, թող իրանց համար սպասեն, իսկ այս փողերը ինձ ճանապարհին պէտք կը գան, վճռեց Տրունիցկին ու հանգիստ քնեց։

Միւս օրը ժամի վեցին Տրունիցկին պանում էր դէպի հիւսիս Վլադիկաւկազի ճանապարհով, իսկ Կատարինէն նստած կրուժոկի այգում անհամբեր սպասում էր նորան, մտայոյզ աչք ածելով չորս կողմը և հաշուելով բոպէները։ Այդպէս խեղճը սպասեց մօտ մի ժամ, բայց Տրունիցկին չէր գալիս։ Ցուսահատուած խեղճը ուզում էր վեր-

կենալ ձայն տալ իւր կառապանին ու վերադառնալ տուն, բայց թուլութիւնից չը կարողացաւ տեղիցը վեր կենալ։ Նորա աչքերը լցուեցին արտասուքով. նա երկու ձեռքով բռնեց կրակի պէս այրուող ճակատը ու գլուխը դրեց սեղանին։ Նորա բախտիցը այդում դեռ ոչ ոք չը կար։ Քառորդ ժամի չափ նա այդ դրութեան մէջ մնաց. յան կարծ մէկը ձեռքը դրեց Նորա ուսին։

—Կատեա՛ ջան, ինչ է եղել քեզ, գնանք տուն, այստեղ քեզ համար շատ ցուրտ է։

Կատարինէն գլուխը բարձրացրեց և Նորա արտասուքից կարմրած աչքերը հանդիպեցին իւր ընկերուհու հայեացքին։

—Դո՞ւ ես, Հեղինէ։ Ով, Աստուած իմ, եթէ իմանայիր թէ ինչ է եղել ինձ... Զէ՛, պէտք չէ. դու պատահաբար եկար այստեղ, չէ՞, ասա, դու լինես քո Աստուածը, մի ծածկիր, բացականչեց Կատարինէն բռնելով Նորա ձեռքը և կասկածով նայելով Նորան։

—Հանգստացիր, հոգիս, զուր կասկածներով քեզ մի տանջիլ։ Աստնին առաջարկեց կառքով զբօսնել. վճռեցինք այստեղ գալ։

—Կը նշանակի Ալեքսանդր Վասիլիչն էլ այստե՞ղ է։

—Ինչո՞ւ ես վախենում։ Նա այս րոպէին կը գայ, հէնց նոր մտաւ ճաշարան գարեջուր խմելու։

Այդ ժամանակ նոցա մօտով անցան երկու տղամարդիկ։ Կատարինէն ճանաչեց նոցա,—Տրունիցկու ընկերներն էին. մի տխուր նախազգացումն սկսեց տանջել Նորան, Նորան թւում էր թէ մի անբախտութիւն պէտք է պատահի։ Կատարինէի սրտում իսկոյն կասկած ծագեց, որ դոքա պատահաբար չեն եկել այդտեղ. այդ կասկածը աւելի ևս հաստատուեց Նորա սրտում, երբ որ նա նկատեց նոցա իւր վերայ յառած խորամանկ ու ծաղրական հայեացքները, նոցա խորհրդաւոր քչփչոցն ու երկդիմի ժպիտները։

Միթէ Ադոլֆը ծիծաղատեղ է շինել ինձ, միթէ ընկերներին ուղարկել է որ տեսնեն, թէ ինչպէս եմ ես ստորացել, ու ուրախանան, մտածում էր Կատարինէն ու սիրտը այրւում փոթորթւում էր։

Հեղինէն հասկանում էր թէ ինչ է կատարւում ընկերուհու սրտում։ Նա ուզում էր Աստնուց լսածը պատմել Կատարինէին, որ նա զգւանք զգայ գէպի Տրունիցկին, բայց սիրտ չէր անում ասի, գիտէր, որ Կատարինէին այդ շատ ցաւ կը պատճառի։

Իսկ Տրունիցկու ընկերները միևնոյն ծառուղիով յետ ու առաջ դրօսնելով շարունակում էին իրանցը, աւելի ևս լիրբ հայեացքներ դցելով Կատարինէի վերայ։ Այժմ նա բոլորովին համոզուեց, որ իւր կասկածը ճիշտ է և աւելի սաստիկ զգաց, թէ ինչ աստիճան ստորացել է ինքը. որ ձեռքին ճար լինէր տեղն ու տեղը գետին կը մտնէր ամօթիցը։ Այդպէս դժոխային մտատանջութեան մէջ նա ճնաց մի քանի րոպէ. վերջապէս նա ոյժերը հաւաքեց, վերկացաւ տեղիցը, պինդ սեղմեց Հեղինէի ձեռքը և համարեա բռնի քաշ տուեց նորան տարաւ այգու հեռաւոր մի անկիւնը։ Հեղինէի սիրտը կտրատուում էր նորա դրութիւնը տեսնելիս, ուզում էր թեթևացնել նորա տանջանքները, բայց չէր իմանում ինչպէս անի, ինչպէս սկսի։

Վերջապէս Կատարինէն չը կարողացաւ էլ իրան պահել. սիրտը բաց արեց Հեղինէի առաջ։ Նա զգում էր որ ինքը կարօտ է օգնութեան և այդ րոպէին Հեղինէի վերայ նայում էր իբրև պահապան հրեշտակի վերայ։

—Վա՛յ ինձ, վա՛յ իմ գլխիս, յուզմունքից դողդողացող ձայնով արտասանեց նա, խայտառակուեցի, ամբողջ քաղաքի ծիծաղատեղ դարձայ։ Ամեն բան կը տայի, ոչինչ չէի խնայի, որ նամակս նորանից յետ առնէի ու նորա երեսին ասէի թէ նա զզուելի խաբեբայ է։

—Բո ցանկութիւնը արդէն կատարուել է; Կատեա, նամակդ պատռուել են։

—Ո՞վ է պատռել։

—Հանգիստ եղիր, հոգիս, մեր բարի Ալեքսանդր Վասիլիչն է պատռել։

—Ոչինչ չեմ հասկանում։ Ասա ինձ, Աստծու սիրուն, դուք ո՞րտեղից էք ամեն բան իմացել և ինչո՞ւ էք ժողովել այստեղ։ Մի տանջիլ ինձ, շուտ արա, ասա, թէ չէ կը գժուեմ։ Չը լինի՞ Գէորգն էլ բան է իմացել, հարցնում էր Կատարինէն սպրտնած, հազիւ շունչ քաշելով։

Հեղինէն կատարեց նորա խնդիրքը, աշխատելով միայն ծածկել նորանից իրականութեան ամենացաւալի մասը։

—Կատեա, ես այսօր երկու անգամ գնացել եմ ձեր տուն, ուզում էի քեզ ասեմ որ նա Թ-սից գնացել է, բայց չը կարողացայ քեզ տանը գտնել։

Կատարինէն վերջին խօսքերը չը լսեց. նա երկու ձեռքով երեսը բռնած դառը արտասունք էր թափում։ Վերջապէս նա ազատութիւն տուեց իւր խոցուած սրտին, իւր ոտնատակ տուած ինքնասիրութեանը։ Հեղինէն ոչինչ չէր ասում, իմանալով որ արտասուքը սիրտը կը հովացնի։ Երբ որ Կատարինէն մի քիչ հանգստացաւ, Հեղինէն առաջարկեց տուն գնալ։ Հէնց որ նոքա վերկացան տեղներիցը, նրանց մօտեցաւ Ասունին։ Կատարինէն սկզբում ամաչեց, բայց յետոյ շնորհակալութեան զգացմունքով սեղմեց նորա ձեռքը։ Հեղինէն ու Կատարինէն առաջ ընկան։ Ասունին քաղաքավարութիւնից չէր մօտենում նրանց ու յետ էր ընկնում, ցանկանալով իւր ներկայութիւնը անզգալի դարձնել Կատարինէի համար։ Տիկիններին կառք նստացնելով, Ասունին ինքը տեղաւորուեց կառապանի կողքին, որ նոքա կարողանան ազատ խօսել։

—Ա՛խ, Հեղինէ ջան, ինչ երեսով պէտք է տուն գնամ, ասաց Կատարինէն ճանապարհին և արտասունքը առուի պէս թափեց աչքերից։ Տէր Աստուած, ինչ կը լինի իմ օրը, ինչ պէտք է անեմ այժմ։

—Մի յուսահատիլ, հոգիս. մի բան որ էլ դու նորան չես սիրում, մխիթարում էր ընկերուհուն Հեղինէն, ընքշաբար բռնելով նորա երկու ձեռքը։

Թէև Կատարինէն լուռ էր, չէր խօսում, բայց Հեղինէն գիտէր թէ ինչեր էին անցնում նորա մտքովը։ Նա աշխատում էր հանգստացնել Կատարինէին, բայց նա կարծես չէր լսում նորան, աչքը ներքև գցած շարունակում էր լռութիւնը։

Քանի մօտենում էին տանը, Կատարինէի վրդովմունքը աւելի ու աւելի սաստկանում էր. երբեմն երբեմն նա ցնցւում էր նստած տեղը։ Տանը նորա դողը աւելի սաստկացաւ և նա ուժասպառ ընկաւ անկողնի վերայ։ Հեղինէն տաք փաթաթեց նորան ու նստեց նորա մահճակալի պռնկին։

Ասունին գնաց Սահառունու առանձնասենեակը, աշխատելով առժամանակ նորա ուշադրութիւնը հեռացնել կնոջից։

—Կարծեմ Կատեան ու տիկին Հեղինէն եկել են, Ալեքսանդր։

—Հա, եկան, բայց պէտք է առայժմ նոցա հանգիստ թողնել, երևի այժմ նոքա շորերը փոխելիս կը լինեն. ճանապարհին անձրևը կարգին թրջեց նոցա։ Շնորհաւորում եմ, վերջապէս դու էլ

ընկար մասնաժողովի մէջ, աւելցրեց նա նայելով սեղանի վրայի թղթերին։

—Այնպէս ես ասում, Ալեքսանդր, կարծես ուրախ չես որ այդպէս է եղել։

—Ճիշտ որ ուրախ չեմ. սիրտս վկայում է, որ դու այդ գործի պատճառով կը մնասես։ Եթէ չեմ սխալւում, հարցը նրանում է, թէ ում է պատկանում այն հողը, որ գտնւում է կոմսի գործարանի կողքին և որտեղ կոմսը պատահաբար հանք է դտել։ Այդ հարցը ինքն ըստ ինքեան շատ պարզ է, բայց այնպէս են խճճել, որ անհնար է ճշմարտութիւնը լուսաբանել առանց կպչելու կոմսի պատուին ու շահերին. իսկ կոմսը մեզնում այնպիսի դիրք ու աղդեցութիւն ունեցող անձնաւորութիւն է, որ չի կարելի անպատիժ նորա խաթրին դիպչել։

—Բայց մենք կը դիպչենք, որովհետև այլապէս անհնար է գործին արդարացի վճիռ տալ։ Այ այս թղթերը քրքրելով ես համոզւեցի, որ ոչ միայն հողերը ապօրինի կերպով է իւրացրել կոմսը, այլ գործարանն էլ խարեբայութեամբ է խլել անփորձ մարդկանց ձեռքից։ Թէև ես հէնց առաջին նիստում նկատեցի, որ մասնաժողովի անդամների մեծ մասը, չ՝ուզենալով գրգռել կոմսին իւր դէմ, նորա կողմն է պահում, բայց յոյս ունիմ, որ վերջ ի վերջոյ կը կարողանամ նոցանից մի քանիսին համոզել, որ անաչառ կերպով վերաբերւեն գործին։

Ասունին կասկածանքով գլուխը թափ տւեց և ուզում էր ինչոր առարկել, բայց Սահառունին խօսքը բերնումը թողեց,—դորա մասին յետոյ կը խօսենք, իսկ այժմ գնանք տիկինների մօտ, տեսնենք ինչ նոր բան կը պատմեն մեզ տիկինները։

Ասունին զգուշութեամբ վերցրեց գլխարկը ու աննկատելի կերպով դուրս եկաւ սենեակից։ Սահառունին նկատեց որ Կատարինէն շատ սպրտնած է ու տխուր։

—Ի՞նչդ է, Կատեա, կարծես քէֆ չունիս։ Ինչ տեսակ մարդ ես, քեզ ասացի որ վատ եղանակ է, տանից մի դուրս գալ, չը լսեցիր խորհուրդիս։

—Ոչինչ, Գէորգ... մի քիչ ցուրտ դիպաւ... արտասանեց Կատարինէն սաստիկ շփոթւած, գլուխը բարձից մի քիչ բարձրացնելով։

Հեղինէն տեսնելով որ անյարմար է մնալ, վերկացաւ որ գնայ։

—Ո՞ւր, տիկին Հեղինէ, աղաչելով արտասանեց Սահառունին։

—Խա՛չը, չեմ կարող մնալ, ասաց նա մի քիչ յուզուած և, համբուրելով Կատարինէին, գնաց։

Հեղինէն շատ տխուր վերադարձաւ տուն. սկի չէր կարողանում մոռանալ ընկերուհու անտանելի դրութիւնը։

—Ռո բացակայութեան ժամանակ Ելիզաւետա Բօգդանովնան եկել էր քեզ խնդրելու որ մասնակցես սիրողների ներկայացմանը, ասաց նորան մարդը։

—Ինչ է կպել ինձ ու ձեռ չի քաշում, հազար անգամ ասել եմ նորան որ թատրոն ներկայացնել չեմ կարող։

Ամիրանովը յօնքերը կիտեց։

—Նա արդէն հաւատացրել է կոմսուհուն, որ դու մասնակցում ես։ Ինքդ ասա, Հեղինէ, լա՞ւ է ամօթով թողնել Ելիզաւետա Բօգդանովնային, քանի որ դու նորանից բացի լաւութիւնից ոչինչ չես տեսել։

—Ինձ ինչ թէ ամօթով կը մնայ. ինձ այն է զարմացնում, որ Միհրանովան առանց ինձ հարցնելու իրան ու դլխու իմ տեղակ խօսք է տալիս։

—Արի, Հեղինէ ջան, մի թարսուիր, իմ խաթեր մասնակցիր։ Մի մոռանալ, որ ներկայացումը բարեգործական նպատակով է։

—Մի բանում որ Միհրանովայի մատը խառը լինի իմ կարծիքով էլ այստեղ իսկական բարեգործութիւն չի կարող լինել։

Մի քիչ յետոյ մարդը նորից խօսք գցեց ներկայացման մասին։

—Ձեռք քաշիր ինձնից, Միշէլ։ Պէտք է հասկանաս, որ ես չեմ կարող մասնակցել. առաջինը այն պատճառով, որ այժմ ես պէտք է հանգիստ մնամ, երկրորդ էլ որ ես բեմական ձիրք չունեմ։ Լաւ կանէիր, եթէ ուրիշներին խնդրէիր։

—Լռիր, Աստուած սիրես, երբ պէտք է հասկանաս վերջապէս որ ոչ ոք քո խորհուրդներին կարոտ չէ, բարկացած գոռաց Ամիրանովը ու հեռացաւ նորանից։ Ո՞րտեղ էիր այսօր, խստութեամբ հարցրեց նա կնոջը մի քիչ յետոյ։

—Սահառունիների մօտ։

—Հ՛ըմ... Սահառունիների մօտ... հ՛ըմ։

—Ինչպէս տեսնում եմ քո կարծիքով նրանց մոտ գնալն էլ յանցանք պէտք է համարել։

—Եւ ի հարկէ նրանց մօտ պատահեցիր զանազան Թոմաևնե-րի ու Պեարսոսիների հետ։ Նրանք են քեզ իմ դէմ լարում։

—Եթէ չեմ ուզում մասնակցել, կը նշանակի քո դէմ լարա՞ծ եմ, ժպտաց Հեղինէն։

—Զարմանալի է, քեզ որ Թողնեն բացի Սահառունիներից ոչոքի հետ ծանօթութիւն չես անիլ

—Իսկ ինձ աւելի զարմանալի է Թւում, որ դու պահանջում ես շահասիրական նկատումներով ծանօթութիւն անել։

—Քեզ խորհուրդ կը տայի, որ ինձ հետ խօսելիս այդ տօնը Թողնէիր, Թէ չէ...

Ամիրանովը սպառնալից կերպով նայեց կնոջը և դուռը շրրխկացնելով տանից դուրս եկաւ։

—Չէ՛, այսպէս չի լինի, պէտք է այնպիսի քիթ ու պռունկով այդ պարոններին ընդունել, որ ոտները կտրեն մեր տանից, մտածում էր Ամիրանովը ճանապարհին։

Հեղինէի գնալուց յետոյ Սահառունին մենակ մնաց կնոջ հետ։

Այսօր բոլորն էլ մի տեսակ են, մտածում էր նա, մի բան պատահած կը լինի, ինձնից ծածկում են։

—Կատեա՛ ջան, հօ բան չի պատահել քեզ սանամօրդ մոտ։ Երեսիդ գոյն չի մնացել, հարց ու փորձ էր անում մարդը սաստիկ անհանգիստ սրտով։

Կատարինէն երկար ժամանակ ոչինչ չէր պատասխանում, վերջապէս սիրտը պնդացրեց ու լացակրկնած սկսեց խօսել,—Ա՛խ, Գէորգ, ես սանամօրս մոտ չէի գնացել... Այս ի՞նչ անբախտութիւն էր որ պատահեց ինձ... ինձ էլ ոչինչ մի հարցնիլ... չեմ կարողանում պատասխանել... երբ որ կարողանամ ամեն բան քեզ կ՚ասեմ... Այժմ ինձ մենակ Թող, սաստիկ յոգնած եմ, ուզում եմ հանգստանալ, աղաչելով աւելցրեց Կատարինէն երեսը բարձով ծածկելով։

Միւս օրը Սահառունին մի քանի անգամ փորձ արեց կնոջ հետ պարզ խօսելու, բայց միշտ Թողնում էր այդ դիտաւորութիւնը վախենալով որ այդ կը վրդովեցնի կնոջ սիրտը։

—Գէորգ, ո՛րքան մեղաւոր եմ քո առաջ, յանկարծ դուրս

թուաւ Կատարինէի բերնից երեկոյեան։ Որքան ծանր է ինձ համար յայտնել քեզ ճշմարտութիւնը, սկսեց լալ նա և երկու ձեռքով ծածկեց դէմքը։

Սահառունին հասկանում էր, որ կնոջ վրդովմունքի պատճառը Տրունիցկին է և թէև այդ սաստիկ ցաւ էր պատճառում նորան, բայց տեսնելով կնոջ տանջանքն ու զղջումը նա աշխատում էր ցոյց տալ թէ հանգիստ է։ Նա սաստիկ խղճում էր կնոջը։

—Հոգիս, բաւական է քեզ տանջես, մխիթարում էր Կատարինէին Սահառունին, գրկելով նորան։ Ես ամեն բան կը ներեմ քեզ, միայն դու սիրտդ հանգիստ պահիր։ Չէ՞ քեզ ինաս է վրդովուել այժմ։

Այդ խօսքերը մի քիչ սիրտ տուեցին Կատարինէին. նա յառեց աչքերը մարդու վերայ կարծես ուզում էր թափանցել նորա հոգու խորքը, բայց էլի առանց մի խօսք ասելու ձեռով արեց որ սենեակից դուրս գայ։

Միւս առաւօտ Կատարինէն աւելի հանգիստ էր երևում և երբ որ մարդը հարցրեց թէ ինչպէս է առողջութիւնը նա սաստիկ քնքշութեամբ ընկաւ նորա գիրկը։

– Աստուած իմ, ի՞նչ անբախտ մարդ եմ ես. դու այնքան անարատ ես, Գէորգ, որ էլ ինձ սիրել չես կարող։

—Հանգստացիր հոգիս, ես քեզ առաջւայ պէս սիրում եմ և պէտք է սիրեմ։

Սահառունին այնքան յուզուած էր որ էլ ոչինչ ասել չը կարողացաւ։

—Գէորգ, հոգիս, ներիր, հաւատացիր որ դու ոչ մի ժամանակ այնքան սիրելի չես եղել ինձ համար որքան այժմ, բացականչեց Կատարինէն լացակրկնած ու պատմեց մարդուն ամեն բան։

—Խօսք տուր, Գէորգ, որ այդ բոլորը մոռացութեան կը տաս և ես քեզ համար առաջւան կինը կը լինեմ։

Սահառունու համար շատ դժուար էր հանգիստ սրտով լսել այդ բոլորը։ Բայց իմանալով թէ որքան հարստութիւն ունի Կատարինէն այդ դժուար բոպէներում մխիթարութեան ու գգւանքի, բռնեց նորա ձեռքը և յուզմունքը զսպելով ասաց.

—Հանգստացիր, հոգիս, շատ բան ես քաշել այս քանի օրը, տայ Աստուած որ այդ քեզ չը ինաստի։

Մենակ մնալով Կատարինէն ամբողջ երկհոգիութեան ընթացքում առաջին անգամ սկսեց ուրախ սրտով մտածել ապագայ երեխայի մասին. նորա միակ յոյսը այդ երեխայի վերայ էր, որ իբրև անխզելի կապ պէտք է կապէր նորան իւր մարդու հետ։

Այդ դէպքից յետոյ Սահառունին սկսեց նկատել, որ կինը կարծես սկսում է իրան առաջուայ պէս սիրել. բայց այդ նորա սրտին միայն կսկիծ և ցաւ էր պատճառում։ Նա Կատարինէին սիրում էր, բայց հայրական սիրով, որ պէտք է իւր սիրելի և թոյլ զաւակին պահպանի ամեն չարիքից ու փորձութիւնից. ուրիշ սէր նա չէր կարող զգալ դէպի Կատարինէն։

—Չէ՛, ես փոխադարձաբար սիրել նորան չեմ կարող, չը նայելով որ շատ կուզէի սիրել, մոռածում էր նա դառնութեամբ և նորա միտքը նորա կամքի հակառակ սկսեց զբաղուել Հեղինէով. ինչ-որ մի ոյժ, մի զօրութիւն ձգտում, քաշում էր նորան դէպի այդ կինը։ Որքան աւելի մոտենում էր նորան Սահառունին, այնքան նոր-նոր թագնուած գանձեր էր գտնում նորա խելքում և սրտում, այնքան աւելի էր համոզւում, որ Հեղինէն կատարեալ մարմնացումն է կնոջ այն իդէալի, որ ինքը ստեղծել էլ իւր երևակայութեան մէջ։

(Կը շարունակուի)